

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material



ՆՈՐ ԲԱՅԱԿԴԻ ՆՈՐԱԳՅՈՒԻՏ ՍԵՊԱԳԻՐՆ
ՈՒ ՆՐԱ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻԶԱՎԱՅՐԸ

(Արտադրած Հ. Ա. Խ. Հ. Գիտության յնզ Արվեստի Բնափառութիւն
Տեղեկագրի Ա շից)

972.6(Կ. 925)

1-78

ԴՐԱՄԱՆ 1981 թ.

ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

ՆՈՐ ԲԱՅԱԶԴԻ ՆՈՐԱԳՅՈՒՏ ՍԵՊԱԳԻՐՆ

ՈՒ ՆՐԱ ՀԱԱԴԻՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

I

Այս ամառ (1927 թ. հուլիսի 6-ից մինչև սեպտեմբերի 7-ը) հնարավորություն ունեցա բավական մանրամասն հետախուզելու նոր Բայազդի քաղաքի շրջակայքում մի տարածություն, վորի տրամագիծն արևելքից արևմուտք (Նորատուսից մինչև Փաշաքյանդի արևմտյան «Խարաբաները») ու հարավից հյուսիս (Դուլալուից մինչև Աղ-կալա) հավասար է 10 վերստի¹⁾: Յերկաց, վոր այս շրջակայքը մինչհայկական ամրությունների մի փոքրիկ աշխարհն է, վորտեղ կողք կողքի կամ իրարից շատ մոտիկ շինված են յեղել բերդակներ ու ամրոցներ հետեւյալ տեղերում. 1. Աղ-կալա, 2. Աղատ խարաբա, 3. Խաչերի գար, 4. Հայրավանք, 5. Դշլաղի Զաղացի գար, 6. Դշլաղի ժամի գար, 7. Մթուրի ձոր, 8. Նորատուսի «Հեր» 9. Նոր Բայազդի ու 10. Փաշաքյանդ:

Այս բոլոր վայրերում պարզ նկատելի են հետքեր հնադարյան ամրությունների, վորոնց պատերը շարված են յեղել կամ շարված են առանց շաղախի, վիթխարի «երաստո» քարերով. վերջիններս որրատաշ չեն, այլ թեթև հարթված, և շարվածքն ել թեև լարածիդ, բայց վոչ թե կիպ ու խցված, այլ արանքներով ու լոկ իրար վրա դարսած: Մեր աշխարհի ճարտարապետության ամենից իրազեկ ու ամենահեղինակավոր մասնագետի—ընկ. Թոռումանյանի կարծիքով այս բոլոր նշանները հատուկ են յերկաթի գարի հնագույն շրջանին ու կամ մինչև սնգամ բրոնզի դարին²⁾: Ի դեպ, հենց այստեղ ել ասենք, վոր մեր նշած ամրող տարածությունը ծայր է ծայր լի և հնադարյան կուրզաններով, վորոնց մի մասը պեղված է հընագետների ջանքերով և կամ փորփրված է տեղացի գանձախնդիր շիրմակրկիտների ձեռքով:

Հիշածս ամրություննեւն ընդհանրապես շինված են ծովային կամ ցամաքային քարքարոտ հրվանդանների վրա, յերկու (Դշլաղի Զաղացի գար, Դշլաղի ժամի գար, Մթուրի ձոր) կամ յերեք կողմից (Աղ կալա, Խաչերի

1) Հետախուզություններիս ժամանակ ինձ շատ աջակցել ե նոր Բայազդի մտավորականներից ընկ. Հովհաննես Բուղումյանը, վորին հայտնում եմ շնորհակալությունու:

2) «Բանքեր Հայաստանի գիտական թանգարական» գիրք Ա. և Բ. Վաղարշապատ, 1921-1922, եջ 212—214 ու 222:

դար, Հայրուվանք, Նոր Բայազիդ, Փաշաքյանդ) ձորակներով ու ձորերով յեղերգած, իսկ Ազատ խարաբան ու նորատուսի Հերի դարը ցամաքային կղզի յեն չորս կողմի զառիթափերով:

Հնադարյան այս ամրությունները կարելի ե բաժանել յերկու գլխավոր տեսակի: Սրանցից մեկ տեսակում ամրությունն ունի պատեր, վորոնք շինված են երաստո քարերով, բայց շարվածքը մի տակ ե. պատի ճակատի քարերի յահեռում վոշ փոքր քարերի անշաղախ լիցք կա ու վոչ ել ներսի կողմից զուդահեռ շարվածք: Պայմանաբար այսպիսի պատերը կանվանենք պատնեշներ: Ամրությունների յերկրորդ տեսակը պատնեշների փոխարեն ունի կանոնավոր պարիսպ եր վիթխարի քարերի յերկտակ շարվածքով ու փոքր քարերի անշաղախ լիցքով: Զարմանալի կանոնավորությամբ ամեն տեղ, վորտեղ կան պարիսպներ, սրանց լայնությունը հավասար ե 3 մետրի կամ մոտ $4\frac{1}{2}$ արշինի:

II

Միայն պատնեշներ ունեցող ամրություններից հատկութեա հիշատակելի յեն Ղըլաղի ժամկի դարինը, Նոր Բայազիդ քաղաքի տրեստյան ծայրին՝ Խաչերի գարինն ու Նոր Բայազիդ—Ղուլուլի ճանապարհի տրեստյան կողմում՝ Մթուրի ձորի զլիխինը: Սրանցից առաջնի պատնեշները լրիվ պահպանված չեն: Խաչերի դարինը վերջին տասնամյակում անդամ նշանակելի են յեղել ամենքին՝ ցածրիկ պատի կերպարանքով, իսկ հիմտ միայն ուշադիր զննողը կարող ե նկատել խոշոր մնացորդները քարաքթի հենց զլիխին¹⁾): Այս ամրությունն արեկելյան կողմից ունի կարճ զետնանցր, վոր տանում ե դեպի մոտակա տղրյուրն: ու սրանից դեպի հյուսիս՝ մի քարայր, վոր այժմ գործ ե ածվում իրքե հարգանոց: Մթուրի ձորի ամրությունից ամենալավ պահպանված ե հյուսիսային պատնեշը՝ տեղ տեղ մինչև $1\frac{1}{2}$ մետր բարձրությամբ, իսկ արեկելյանից ընդհատ քարերի մի շարան և մնացել: Արեմոյան ու հարավային ձորաբերաններում պատնեշների քարերը ցած են գլորված: Ամրությունը հարավային կողմում ունի կարճ զետնանցք, վոր տանում ե դեպի անջուր ձորակը:

Պատնեշավոր ամրությունները բռնում են փոքր տարածություն: Իրեն նմուշ չափագրել ենք Մթուրի ձորի զլիխինը: Սրա արեկելյան պատնեշը մոտ 42 մետր ե, հյուսիսայինը՝ մոտ 75 մետր: Պատնեշապատ հողամասը մոտ $1\frac{1}{3}$ դեսյատին ե:

Պարսպավոր բերգերն են՝ Ազատ խարաբայինը, Հայրավանքինը, Ղըլաղի Զաղացի դարինը, Նորազուսի Հերինը, Նոր Բայազինն ու Փաշաքյանինը:

Սրանցից Հայրավանքի մասին պետք ե ս սենք, վոր հենց վանքի մոտ աշկարա յերեռում ե 3 մետրանոց պարսպի հետքը, բայց շարունակությունը

¹⁾ Տեղացիների ասելով՝ Խաչերի դարի պատնեշների քարերը յերկու տարի առաջ ցած են զլորված, ջարպութած ու գործ են ածված քարաքթին մոտիկ ձկնաբուծական կայանի շնության վրա:

մինչև վերջ յերեվան հանելու ժամանակ ու հնարավորություն չենք ունեցել: Պարիսպները Փաշաքյանդի ամրոցի, վորը տեղացիներից մինչև որս ել «Բերդ» ե կոչվում, միշտ ել յերեվան ե գալիս փորվածքի ժամանակ: Այս ամրությունը տեղացիների ու Նոր Բայազիցիցների համար ծառայում է իրեն քարհանք. ում վոր քար ե հարկավոր, գնում ե Բերդի դարը, գետինը փորում, մինչև հասնում ե մի պատաշարի, և ահա վորոնած քարանյութը պատրաստ ե: Փորվածքներից յերեվում ե, վոր պարիսպը յերկշար ե՝ փոքրը քարերի (ու թերես նաև չոր հողի?) լիցքով:

Վորոշապես նկատելի շուրջանակի պարիսպներ ունեն Ազատ խարաբայի, Ղըլաղի Զաղացի դարի, Նորատուսի Հերի ու Նոր Բայազի բերդը: Սրանց պարիսպները կամ կոնգուն են, կամ հիմերը պարզ նկատելի են և կամ կարելի ե վերականգնել քարաշարի ուղղությունն ու հանած քարերի փորվածքի գիծը շարունակելով: Մեծության կորպով ամենից փոքրն ե Ազատ խարաբայինը, սրանից տարածուն և նորազուսի Հերինը, հետո Ղըլաղի Զաղացի դարինն, իսկ ամենից մեծն ե Նոր Բայազինը:

Ազատ խարաբայի բերդը գտնվում է ծովակի ափին, Հայրավանքից դեպի հարավ-արեկմուտք տարածվող համանուն ավերակների մեջ, այն բըլրի զլիխին, վորի լանջերին ու ստորատում կան յեկեղեցիների ավերակներ ու հայկական գերեզմանատուն: Պարիսպների հիմքերը չորս կողմում ել պարզ յերեռում են: Դուռն այն անկյունումն ե, վոր ամենից մոտ և Որդաքըլու—Նոր Բայազի խճուղուն: Պարիսպների ներսում նկատելի յեն մանրաքար ու նեղ պատերի քառանկյուն հետքեր:


Նորատուսի Հերի բերդը գտնվում է զյուղի համանուն նավահանգստի մոտ, այն քարափների կողքին, վորոնք հայտնի են՝ «Թարոյի պալեր» անունով: Բերդի բլուրը «Հեր» (այր) ե կոչվում այն պատմառով, վոր նրա հարավային կողմում կա բնական մեծ քարայր, վորտեղ կենդանիներ են պատսպարում: Շուրջանակի նկատելի յեն պարսպի հիմքերը կամ մնացորդները. վերջիններս արեմտյան կողմում լավ յերեռում են՝ զետնից բարձրացած մի քանի քարի չափ¹⁾): Ուշագրավ ե, վոր պարիսպները տեղատեղ ունեն աստիճանավոր պատվանդաններ, վորոնք ըստ յերեռութին փլումները կանխելու և պատերն ամրանիմն զարձնելու համար են: Բերդի զլիխին, վոր թեքվում ե դեպի հարավ, կանտրոնում զոգավոր ե: Բերդի զլիխին հարավային կեսը բռնում են արտեր, իսկ արեմտյան ու հյուսիսային մասերը՝ բըլրնակելի տարածության բազմաթիվ հետքեր: Քառանկյունի ձգված ու մանրաքար պատերի հիմքեր ամենից շատ կան հատկապես այս բերդի զլիխին:

III

Նոր Բայազինը չհաշված՝ ամենից ուշագրավն ու հայակապը Ղըլաղի Զաղացի դարի ամրոցն ե:

¹⁾ «Փոքրիկ բրդածի ասովածաշն բարձր պարսպավոր բըլրակ»—հիշատակում ե յուր դրում Սմբառյանը (Մհորոր արքեպ. Սմբառյան «Տեղեկացիր Գեղարքունիք ծովագրութած կազմարշապատ, 1895, եջ 486):

Այս բերդը գտնվում է Դվինից նորառուս տանող ձանալարհի արեւադան կողմանը մի կողմից հենվելով հարավային ձորին, իսկ յերկրորդ կողմից՝ արեւելյան բարձրաբերձ զառիթափին։ Ամրոցի ստորոտով պատյան անելով անցնում է Գավառապետը։ Մեր նշան ամրությունների մեջ այս



Առաջի Շաղացի զարի բերդի հատկագիծը

1. Բացվածք հյուսիսային պատի մեջ, 2. Հյուսիսային առաջին բուրդ, 3. Բարձրակ շարժածքի հիմք, 4. Հյուսիսային յերկրորդ բուրդ, 5. Արեւայան ճակատի բուրդ, 6. Հարավային առաջին բուրդ, 7. Շինության հիմքի պարագից զարա, 8. Հարավային յերկրորդ բուրդ, 9. Դառ, 10 ու 11. Դուռն ներսի կողմից յելուսուներ, 12. Արեւելյան պատի հետքեր, 13 ու 14. Շինության հիմքի պարագի ներսուներ

բերդն ամենաբարձրն է և շատ վեհատեսիլ զիրք ունի արեւելյան ձորաբերանին։ Ամրոցը թե պատնեշավոր ու թե պարսպապատ և միաժամանակ բերդի զիսի հարավային մասը հիմտ բռնում է արտեր պարագի ու պատնեշի արանքում։ Այս յերկու միջի տարածությունն արեւելյան ձորաբերանին մաս 20 մետր է, իսկ քանի զնում է զեզի հարավ, բացվում, լայնանում է մի քանի անգամ։ Պատնեշն ավելի լավ պահպանված է արեւայան, քան հյուսիսային կողմում։

Պարսպապատ մասը, վոր թեք և, խոնարհված զեզի հարավարեւելք, սեղանակերպ և կողման կողման կողման կողման ական ական հյուսիսից պաշտպանված լինելու

նույնպես կան պարագի հիմքի հետքեր ու զեզի արեւելյան ձորը տանող փոքրիկ զիտնանցք, վոր խցված է Մնացած պարիսպներ, վորոնք 3 մետրանոց ու յերկշար են, երաստ ժայռերից, վորք քարերի անշաղախ լիցքի, այնքան լավ են պահպանված, վոր հենց առաջին հայտնացքից ցայտուն ներկայացնում են բերդի ընդհանուր կերպարաններ՝ մեծ ապագարություն անելով։ Ավելի կանգուն են մեացել արեւայան ու հատկապես հարավային պարիսպները։

Հյուսիսային, արեւայան ու հարավային պատերի մեջ կան անկյունավոր յելուսուներ (վատուն), անկյունավոր բուրդեր, վորոնց նմանները թուրումանյանը մատնանշել ե Արագածի հասպարյան բերդաբարձրությունը⁽¹⁾։ Հյուսիսային պարիսպն ունի 2 յելուսում 3^{1/2} ու 6 մետր ճակատով, արեւայանը՝ 1 յելուսում 3 մետր ճակատով և հարավային բերդի 2 յելուսում՝ 3 ու 4^{1/2} մետր ճակատով։ Հյուսիսային առաջին բուրդը՝ 1 մետր, հյուսիսային յերկրորդ բուրդը՝ 1^{1/2} մետր, արեւայանը՝ 1, հարավային՝ առաջին բուրդը՝ 1^{1/2} ու հարավային յերկրորդ բուրդը՝ 2 մետր առաջ են ցցված պարագի զծից։ Ես յն կարգով բուրդերի բռնում տարածությունը կամ ուրիշ նրանց զիսի առածության չափն են 14, 26, 12, 14 ու 22^{1/2} քառակուսի մետր։ Արանց յերեսը ե, վոր զիսի պարագի բուրդեր յեզել են հյուսիսային յերկրորդ ու հարավային յերկրորդ բուրդերը, վորոնց մեջն ու շուրջն ամենից շատ կան վորք քարեր թափած։

Դուռը, վոր զանվուն է հարավային պարագի մեջ հարավարեւելյան անկյունին մատիկ, ունի 2 մետր լայնություն։ Արա յերկու կողմից պարիսպները՝ 1^{1/2} մետր լայնանում են զեզի ներս կազմելով աջ ու ձախ յելուսուները 2^{1/2} մետր ճակատով ճակատով։ Արտ զիսաց, հյուսիսային պատի մեջ հյուսիսարեւելյան անկյունի մաս, կա համապատասխան բացվածք, վորք կարող ե ելի զուռ լինել։

Պարիսպներից ներս կան շինություն երի հետքեր հատկապես արեւայան ու հարավային կողմերում։ Խոշոր քարերով շինություն բարձր հետք կա նաև հարավային պարագին կից, հարավային մեծ բուրդի մաս։

Բերդի հյուսիսային պարագի յերկրությունն է մաս 51 մետր, արեւայանը՝ 66, հարավայինը՝ 104 ու արեւելյանը՝ 100։ Պարսպագի և կողմանը բանում է մաս 2^{1/3} զեզամանի տարածություն։

Դշաղի Զաղացի զարի բերդը մեր աշխարհի վոչ միայն հնագարյան հարավարտապետական, այլ և ուղմական արվեստի նշանավոր ձեռակերտներից ե, Նոր Բայազեղի շրջակայիր ցուցնելիք հաւարձանների մեջ լոգազույններից մեկը։

IV

Պարսպագի բերդերից ամենամեծն է Նոր Բայազեղինը։

Ամրությունների այն շղթայի միջի, վոր բուրում և նրա շուրջն այս ամրոցը բռնում է կենարան սկան ական հյուսիսից պաշտպանված լինելու

⁽¹⁾ Կույն Բանքերում, էջ 217, 222։

լով Աղ-կալայի, Հայրավանքի, Ազատ խարաբայի, արեմուտքից Փաշարյան-
դի ու Խաչերի գալի, հարավից Մթուրի ձորի և արևելքից Նորատուսի Հե-
րի ու Դշլաղի զույգ բերգակներով ու բերդերով:

Երա պարսպապատ լինելու մասին գրականության մեջ վաղոց հիշատակություններ եան՝¹): Բայց ամբոցի՝ վոր դարձրջանի ձեռակերտ լինելու հարցը շոշափված չե յեզել և որակարգի մեջ և մտել այստեղի սեպագրի գյուտից հետո միայն։ Սրա պարիսպների լայնությունը, վոր շատ տեղ եմ չափազրել, առևնուրեք ելի Յ ժետր է, մի անհերքելի ապացույց, վոր այս ամբոցը պատկանում է վերեւու նկարագրած պարսպապար բերդերի շարքին ու դարձրջանին։


Բերդը մի յերկուր ցած հրվանդան ե՞ւ արևելքից արևմտաք բնկած։ Գլուխը ժիանզամայն հարթ տափարակ է, վոր փռվում ե բերդի պարիսպներից ել շատ հեռու գեղի արևելք։ Արևմտյան ծայլը յերեք կողմից ուղղաձիգ ժայռապատ ե ու դժվարամատչելի։ Հարավային կողմում քարավը շարունակվում է մինչև վերջ, իսկ հյուսիսային կողմում ավարտվում է արևելյան յերկրորդ սլարսպին գեռ չհասած։ 19-րդ դարում բերդի պարիսպները բավական բարձր են յեղել. իսկ այժմ կարելի ե տեսնել կմ հիմքի քարերն ու կտմ այս քարերը հանելու համար արված վորվածքը, վորի լարաձիգ ուղղությունը մատնում է սլարսպի տեղը։ Հիմա բերդի զլուխը նոր բայազդի յերկու գերեզմանատունն է, վորոնց արանքը կալատեղ է։ Պարիսպների մասին վկայում են ծերերն ու հասակավորներն, այլև տեղական գերեզմանափորները։ Պարիսպների քարերը ծառայեցնելիս են յեղել յերկու նպատակի. կամ զլորել են ցած, դեպի «կալերի թաղն» ու տներ շինել և կամ գործ են ածել իրրե շիրմաքար։ Այս վերջին կիրառումը շարունակվում է մինչև որս ել։

Բերդը շուրջանակի միապարիսալ է, բայց ունեցել է միջնարերդ հվ, վորն արևմտյան տվելի անառիկ ծայրումն և յեղել։ Միջնարերդն ստացվել և մի հասարակ յեղանակով. ամրոցի հավասարասունք ու յերկար յեռանկյունին, վորի զագաթն արևմուտքումն է, արևելյան պատին զուգահեռ Յ մետրանոց մի նոր պարսպով բաժանվել և յերկու մասի՝ արևմտյան ու արևելյան. արևմտյան յեռանկյունին միջնարերդն է, արևելյան սեղանակերպն՝ արտաքին ամրոցը։ Բերդի պարիսպների հիմերն ամենից լավ նկատելի յեն հյուսիսային կողմում. հարավային կողմում հին պարսպի մասեր յերեվում են ո. Ստեփանոսի մատուռի մոտի ձորաբերանում։ Պարսպի հիմերի փորվածքներն աշկարա նկատելի յեն թե հյուսիսային, արևելյան ու թե հարավային կողմում։ Միջնապարսպի հիմքեր նշմարվում են մատուռի արևելյան ու հյուսիսային պատերի մոտ՝ հարավից հյուսիս ձգված։

Զույգ զերեզմանատների արանքում հյուսիսային կողմում պարզ նկա-

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԱՐՎԵՍԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ

տելի են շինությունների հետքեր՝ Ամրոցի հարավային քարափների մեջ կան մի քանի բաց կամ խցված քարայրեր. սրանցից 2 զլխավորը, վորոնք իրար հետ կտակված են միացնող անցքով, դանվում են սիջնարերդի քարաքթից մի քիչ դեպի արևելք։ Հարավային լանջումն են նաև այն քարե ու



Նոր Բայազդի բերդի հատակագիծը

1) Հովհ. Եղիս. Շահնշաթունյան «Ստորագրություն Եջմիածնի և հինգ զավառացն», հատոր Բ. Վաղարշապատ, 1842, էջ 237, «Մշակ» որաթերթ, Թիֆլիս, Թ. տարի, 1880 թ. սեպտ. 30, № 172—Յեղեկ Պետրոսյանի «Նամակ Նոր Բայազեղից», Ալիշան «Սիսական», Վենետիկ, 1893, էջ 43, Սմբատյան «Գեղարքունիք», 59:

¹⁾ Ամբատյան «Գեղարքունիք» 59. — «Հերկում ելին եկեղեցւոյ և տանց ավերակներ»:

1. Установка пыльца на яичник
2. Установка пыльца в яйцеклетку
3. Установка пыльца в яйцеклетку
4. Установка пыльца в яйцеклетку
5. Установка пыльца в яйцеклетку
6. Установка пыльца в яйцеклетку
7. Установка пыльца в яйцеклетку
8. Установка пыльца в яйцеклетку
9. Установка пыльца в яйцеклетку
10. Установка пыльца в яйцеклетку
11. Установка пыльца в яйцеклетку
12. Установка пыльца в яйцеклетку
13. Установка пыльца в яйцеклетку
14. Установка пыльца в яйцеклетку
15. Установка пыльца в яйцеклетку
16. Установка пыльца в яйцеклетку
17. Установка пыльца в яйцеклетку
18. Установка пыльца в яйцеклетку
19. Установка пыльца в яйцеклетку
20. Установка пыльца в яйцеклетку
21. Установка пыльца в яйцеклетку
22. Установка пыльца в яйцеклетку
23. Установка пыльца в яйцеклетку
24. Установка пыльца в яйцеклетку
25. Установка пыльца в яйцеклетку

թերեւ քարակոփ սենյակները, ¹⁾ վորոնց մուտքը ժայռերի փուլ զոլու հետեանքով հիմա փակված է, բայց կարելի է բանալ: Այս սենյակների ներկայությունը հնագիտական խոշոր նշանակություն ունի բերդի կարեռությունը բացահայտելու տեսակետից:

Ամենահետաքրքական կառուցումներից են այն յերկար գետնանցքերն ել, վորոնք բերդի գլխից տանում են մինչև ձորամիջի ջուրը—Գավառագետը: Մինչև այժմ կարծվում էր, թե բերդի գլխից մեկ գետնանցք կա ²⁾ հետախուզումը պարզեց, վոր գետնանցքերը յերկու հատ են և զուգահեռ, մեկը միջնարերդից ե, իսկ յերկրորդն արտաքին ամրոցից: Ներքնուղիները մյուս բերդերի գետնանցքների համեմատությամբ բավական ընդարձակ են, պատերը շարված են խոշոր քարերից, իսկ ծածկը միակառւր սալաքարերից է: Արտաքին ամրոցի գետնանցքի յերկարությունը մոտ 270 մետր է, վոր հնում կարող եր ավելի լինել, յերբ գետնանցքն ավելի յե մոտեցած յեղել գետին: Միջնարերդի ներքնուղու յերկարությունն ե մոտ 265 մետր: Միջնարերդի անցքի բերանը կտվում է մատունի հարավային կողմում յեղած Ստեփանոս եպիսկոպոսի խաչարձանից մոտ 24—25 մետր ուղիղ գեղին արեւմուտք: Արտաքին ամրոցի անցքի բերանը նույն մատունի հյուսիս արեւելյան անկյունից մոտ 13—14 մետր ուղիղ գեղին արևելք ³⁾): Բերդի գլխին գետնանցքերի բերաններն իրարից հեռու են մոտ 50 մետր: Միջնարերդի գետնանցքի ձորամիջի բերանը բացվում է կաղապար շինող Շահրապ Շահյանցի բակի մեջ քարայրի կերպարանքով և հիմա պետքարանի ե վերածված: Արտաքին ամրոցի ձորամիջի բերանը բացվում է կոշկակար Վաղարշակ Չիչակյանցի տան մարադի մեջ, վորը նմանապես վոչ այլ ինչ է, բայց յեթի քարայր՝ առաջը շարած, զուռ կախած ու հարդանոց դարձրած: Չորսամիջի այս բերաններն իրարուց հեռու են մոտ 30 մետր: Արտաքին բերդի գետնանցքը զյուղի մեջ մի տեղ քանդել են փարախ շինելու նպատակով, և հիմա այս ներքնուղին բացված վիճակում կարելի է տեսնել Եփրեմ Մըհիրյանի գոմատեղում՝ զուան շեմքի սալաքարերի տակ: Միջնարերդի ներք-

¹⁾ «Մշակ», նույն համար.—«Կան ոթաղներ»: Ալիշան «Սիսական», 43.—«Զեռագործ սենյակք պաղպաջունք»: Սմբատյան «Գեղարքունիք», 449.—«Ճարտարությամբ շինուած մեկ մեկու մեջ մինչև քանի սենյակներ. պատերը հղկած և վարպետությամբ միմիանց հազցրած քարեր են, և մի քանիսի յուրաքանչյուր պատը կամ առաստաղը միապաղադ քարեր ե կտրած և քանդակներով զարդարուած: Այդտեղից մի ստորյերկրյա ճանապարհ տառած ե ղեպի գետը, փորտեղից, ինչպես կարծվում է, ջուր են տարել պատսպարգածները»:

²⁾ Ալիշան, «Սիսական», 43.—«Գետնափոր ուղի ավելի քան մղոն մի տանելով ի գետն»: Սմբատյան «Գեղարքունիք», 59.—«Գետնափոր ճանապարհ ցցետի բերանը»: «Մշակ», նույն համար.—«Այրեր, վորոնք յերկու վերստ հեռավորությամբ գետնի տակով ունեն հազորդակցություն գավառ ձկնալի գետի համար»:

³⁾ Գետնանցքերի բերդի գլխի բերանները լցված են և ամասը ծածկում են մի քիչ ավելի փարթամ խռարույսերով: Ներքնուղիների այս բերանների ու քարակոփ սենյակների մուտքի տեղերն ինձ ցույց ե տվել նոր Բայազզի բաղաքացի Միրդաշան Մամիկոնյանը, վորը գավառի հնություններին լավ իրազեկ ծերունի է: Ի դեպ, ավելացնելով, վոր սիսակ և Ալիշանի գրածը, թե այսակ «գտան կավեղեն պատկերք կոսց և ուլունք ու գուցյալ յաշ» նոցին» («Սիսական», 43): Ալիշանի աղբյուրը, վոր և «Մշակ» նույն համար, պարզ գրում է. «Որերում մի զյուղում... զուրս և յեկել մի կաւեղեն կուսք... աշքերին հուլունք» և այլն:

նուղին անցնում ե նույն Մհերյանի նոր գնած տան տակով և գետնանցքի սալաքարը յերկում ե բակի մեջ, փողոցի կողմի պատի տակ: Մհերյանի տների առաջ զույգ գետնանցքի հեռավորությունն ե մոտ 21—22 մետր: Տեղացիք պատմում են, վոր այս ներքնուղիները վերջին տասնամյակներում են վչացել հիշողներ կան, թե ինչպես իրենք մանուկ հասակում անց ու դարձ են արել նրանց միջով յերկար տեղ:

Կենտրոնական այս բերդի յերկարությունն ե 375 մետր, արեւելյան արտաքին պարսպինը՝ մոտ 185 մետր, միջնարերդի յերկարությունն ե մոտ 121 մետր, և միջնարերդի արեւելյան պարսպինը կամ միջնապարսպինը՝ 82 մետր: Միջնարերդի տարածությունն ե մոտ $1\frac{1}{2}$ դեսյատին, արտաքին ամրոցինը՝ մոտ $3\frac{3}{4}$ դեսյատին. այսպիսով ամբողջ բերդի ընդարձակում կարող է մոտ 5 $\frac{1}{4}$ դեսյատին:

Բերդի գլուխն, ինչպես ասացինք, հարթ է, բայց միջնապարսպի մոտ ու սրա յերկու կողքերին բարձր և մի փոքրիկ դարի նման, վորն աստիճանաբար իջնում ե՝ արեւելյան կողմում շուտ հավասարվելով տափառակին, իսկ արևմտյան կողմում՝ ավելի դանդաղ: Ամենայն հավանականությամբ այս բարձրությունը գոյացել ե հնագարյան շենքերի փլած ու հարթված մնացորդներից:


Միջնապարսպի այս թմբի սեռի վրա եր ահա, վոր գտաւ նոր Բայազզի սեպագիրը հետեւյալ հանգամանքներում:

V

Այս տարվա հուլիսի 5-ին նոր Բայազիդ հասնելով՝ սկսեցի ստուգել ու հետախուզել քաղաքի ու շրջակայքի հայկական արձանագրությունները՝ Հայաստանի տնտեսական զարգացման պատմությանը վերաբերող նյութեր հավաքելու նպատակով: Տեսնելով, վոր նույն իսկ քաղաքի արձանագրությունները լրիվ չեն հավաքված, և արտազրվածների մեջ ել բավական սխալներ կան, վորոշեցի հիմնովին ու մանրակրկիտ հետախուզել բերդի գլխի ու ձորամիջի գերեզմանատների խաչարձաններն ու շիրմաքարերը: Այս հետախուզությունների ժամանակակի ինձ ոգնում եյին յերեխաներս, վորոնք զըստրոցական աշակերտներ են: Յերբ հուլիսի 17-ին ել բերդի գլխին հետախուզող շղթա կազմած նորից ու նորից շիրմաքարերը մեկ-մեկ զննելով անցնում եյինք միջնապարսպի թումբն ի վեր, տղաս—Մարտիկը, 12 տարեկան—զեմառավ և մատնանշեց մեկ սրբատաշ դամբարանի կողքին վրա մի ժեռ շիրմաքար՝ ասելով՝ «Վրան գծեր կան, բայց հայերեն տառեր չեն»: Մոտենալով տեսա, վոր մատնանշածը սիպագիր արձանագրություն է:

Սեպագրված քարը, վոր բաղալտ եր, գտնվում եր Սոլոյան ընտանիքի շիրիմների շարքում, Մարիա Սոլոյանի († 1912 թ. մարտի 1-ին) «ըրբատաշ» գավառի հնությունների ժամանակակի ինձ ոգնում եյին յերեխաներս, վոր գավառի հնություններին լավ իրազեկ ծերունի է: Ի դեպ, ավելացնելով, մի շիրմաթումբը: Արձանագրությունը խոշոր գլխաքարի հարավային ու մի քիչ զույգավոր կողի վրա եր և բոնում եր 34×65 սանտիմետր տարածություն՝ կտղմագուծ լինելով 65 սանտիմետերանոց 8 տողից:

Բանի վոր տեղացիները շիրմաքարերը հանու մ եյին հենց բերդի զըլ-իի պարիսպների հիմքերից, ապա յեղբակացրի, վրբ սեպագրված քարն ել անպայման հանված ե դարձյալ բերդի պլիսից, ժոտիկ տեղերից և հավա-



գողազի հպյա վաեռինքո վերամասաւ,

Վորովինետե Սեփանսա լճափից հեռու սեպազրեր հայտնագործված չկային այն դավառում, և ուրեմն բերդի դիմինը նոր սեպազրիր եր, ուստի ան-



միջապես զտածիս մասին հատուկ գրություններով հայտնեցի Հայաստանի Գիտության և Արվեստի Ինստիտուտի նախագահությանը, Պետական Թանգարանի վարչությանն ու Հնությունների Պահպանության Կոմիտեին:

նկարել սկզբնական դիրքում ու վիճակում։ Լուսանկարչական գործիք չունելի, քաղաքում լուսանկարիչ չկար, ուստի լուսժողկոմատի զծով դիմեցի նոր Բայազի լուսրաժնի վարիչ ընկ. Հայկ Ժամկոչյանին՝ խնդրելով, վոր հմուտ մարդ ձարե և ուղարկել սեպագրված քարը տեղն ու տեղը լուսանը կարելու, վոր հետո հոգանք տեղահան անելու մասին։ Լուսանկարող չճարվեց մինչև հուլիսի 4-ը, յերբ Յերեանից յեկան Հնությունների Պահպանության կոմիտեյի ներկայացոց ցիշները։

Հուլիսի 25-ին սեպագրված քարը ցույց տվի Հնությունների Պահպանության կոմիտեյի վարչության անդամներ ընկ. ընկ. Գեորգ Ասատուրին, Ասատուր Խաչատրյանին, Աշխարհբեկ Քալանթարին ու մյուս աշխատակիցներին։ Համալսարանի դասախոս ընկ. Արշակ Տոնյանի ու այլ վկաների ներկայությամբ սեպագրված քարն ու շիրմաթումը լուսանկարելոց հետո միասին շուռ տվինք նախ մյուս յերկու խոշոր ժեռ քարերն ու հետո ել սեպագրվածը, վոր ամենամեծն եր։ Յերբ սեպագրված ու նըստած քարը շուռ տալու համար տեղահան արվեց. յերեաց, վոր եռդի մեջ բաղված նրա կորլնթարթ կողի վրա ել կա սեպագիր արձանագրություն։

Սեպագրված նոր եջը դարձյալ ութ տողից եր (առկերը քիչ յերկայն էին—67 սանտիմետր) և քարի վրա բռնում եր 34×67 սանտիմետր տարածություն։

Գյուտի վայրը կանչված քահանաները վկայեցին, վոր շիրմաթումը ել և Սոզոյան ընտանիքինը, Վերջնիս տարիքավոր ներկայացուցիչ Գեղամ Առղյոյանն ու վորդին հաստատեցին, վոր սեպագրված քարն իրոք հանված ե նշած տեղից և տասնյակ տարիներ շիրմաքար ե ծառայել իրենց մեռելների համար հերթով. յերբ սրանցից մեկին սրբատաշ դամրուն են շինել, ապա այս քարը, վորին իրենք տալիս եյին «Տաշած քար» անունը, պահել քաշել են իրենց նոր մեռածի գերեզմանի վրա։ Հարկ ե հիշել, վոր սրանց ասածին հակառակում եր նոր Բայազի ավագ քահանան, տեր Ստեփանոս Տեր Հակոբյանը. սրա ասելով քարը հանված, բերված ե վոչ թե ձորաբաշից, այլ շիրմաթմրի մոտից անցնող միջնապարսպի հենց հարեան հիմքից։

Հուլիսի 26-ին սեպագրված քարը փոխագրվեց Յերեան, և հիմա գըտնվում ե Հնությունների Պահպանության կոմիտեյի գրասենյակում։ Նրա, իրեւ մեծագույն կուլտուր-պատմական արժողություն ունեցող հուշարձանի, պատշաճ տեղը Հայաստանի Պետական թանգարանն ե անշուշտ։

VI

Այն կենդրոնական դիրքն ու կշիռը, վոր ունի Ներ Բայազի բերդը հազարամյա ամրությունների հիշյալ սիստեմի մեջ, նրա պարսպափակ տարածության գերազանց ընդարձակությունը, արտաքին ամրոցի ու միջնաբերդի հարադրությունը, զետնափոր ու քարաշեն սենյակների ներկայությունը, հազվագեց յերկար ու այն ել ջուխտակ գետնանցքերի զուգահեռ և վերջապես երկիջյան սեպագիրը հնագարյան անտո քարաբերդի գլխին,—

այս բոլորը միասին անհերքելի ապացույցներ են այն բանի, թի մեր առաջ կարկառուն կանգնուծ ե մինչհայկական կյանքի մի յերեսելի կենտրոն, վորի ջանապիր ու հարատես հետախուզությունը պեղումներով հանդերձ կարող ե հայտաբերել կուլտուր-պատմական մեծագին ու անակնկալ նորույթներ։

Ի՞նչպես եր կոչվում մինչհայկական իրականության այս նշանավոր կենտրոնը։

Հիշատակվում ե արդյոք սրա անունը նորագյուտ սեպագրի մեջ։

Վերջին հարցի պատասխանը կունենանք, յերբ սեպագրի վերծանությունը կատարվի խոկական մասնագետ սեպագրագետների ձեռքով։

Հովանական ե, վոր սեպագրի մեջ առ մեծ բերդը հիշատակված լինի վորեւ անունով։ Սակայն նախ քան բենագրի ընթերցումը հնարավոր եմ համարում մասնագետների ուշագրությունը հրավիրել մի քանի իրողությունների վրա, վորոնք թվում ե թե մատնում են նոր Բայազի հնադրայան անուններից մեկը։ Ասում եմ «անուններից մեկը», վորովհետեւ սեպագիրը կարող ե հիշատակել այս ամրոցի մի ուրիշ, յերկրորդ անուն։ Այս դեպքում կունենանք յերկանունության մի նոր որինակ ի շարս այնպիսիների, վորպիսիք են Արգիշտինիլի ու Արմագիր, Վան ու Տուալ, Ազատ ու Մասիս, Սեվանա լին ու Գեղամա ծով, Հայաստան ու Արմենիա և այլն։

Հիմակված նոր Բայազիդ անունը հին չե, այլ հազիվ մի դարի կյանք ունի։ Վայրի հայկական անունն ե Գավառ, վոր թուրքական արտասահմանային գարձել ե Քյավառ։ Ընդհանուր կարծիք ե, վոր Գեղամա գավառ, Գեղամա գավառ կրկնելով հետո ասել են սոսկ գավառ՝ հասկանալով Գեղամա գավառը. վերջում Գավառը, վոր գավառի անունն եր, գարձել ե գավառի կենտրոնական շենտնոցի (ոսուլություն) անունը։

Կարծում եմ, վոր Գավառ տեղանշան այս ստուգարանությունը ձիշտ չե։ Այժմյան Գավառ անունը հայերեն «գավառ» բառը չե, այլ մինչհայկական մի անվան հայացրած ձեւ ու մնացորդ։

Տեսնենք ապացույցները։

VII

Նոր Բայազի բերդի գլխի արևմտյան գերեզմանատանը մելիքների շիրիմների շարքում կա մի խաչարձան այս մակարությունը։

«Սուրբ Խաչ» բարձրագույն արժեք է այս գավառում։

Այս խաչարձանի տակ հին շերմաքար չկա այժմ, բայց ժամանակին յեղել ե, այն ել պեղեցիկ քանդակներով, և Սորատյանն արտազ ել ե վրայի հետեւյալ տապանագիրը։

«Սոյս ե հանգիս Շաղուբար աղային, որ երանուեեր Գաւառին»¹⁾։

Շաղուբար աղայի խաչարձանի մոտ կա մի շիրմաքար՝ վրան այսպիսի արձանագիր։

¹⁾ Սմբատյան «Գեղարքունիք», 58.

«Թյս ե հանգիս Ածառւր աղին, որդի Միքանցին, տանուսեր Գա-
ւառին . . . ԶՀԿ ($= 1524$):

Վերոպրյալ արձանագրերից իմանում ենք, վոր Միրանշահի վորդի Աստվածատուր աղան ու Շաղուրաթ աղան XVI դարի առաջին տասնամյակներում այնտեղի տանուտերներն եյին, և վայրը կոչվում եր Գավառ։ Սրանք հավանութեն աղքական եյին, բայց թե իրար ինչ եյին զալիս, դեռ հայտնի չեալքանից։

Հայոց ԶԿԲ=1513 թվականին Գեղարքունյաց մելիքների ու տանուտերների՝ Տաթևի վանքին տված մի վավերագրից պարզվում է Շաղուրաթի ու Աստվածատուրի ազգակցությունը. ստորագրողների թվում կա «Շահնդուրաթ» որպի Աստվածատուրին, թոռն Միքանչին»։ Բացի սրանից, հիշված են նաև, թե Շահնդուրաթը Գալատից է, սակայն նա ստորագրել է վոչ թե Գալատեցի, այլ Գալատոնեցի։

«Ես Շահղութաթ Գավառնեցի, որդի Աստվածատուրին, թռոն Միլան-
շինք»:

Այս «Գավառնեցի» ձեզ յենթադրել եւ տալիս մի տեղանուն կամ գավառն ու կամ, վոր ավելի հավանական եւ, Գավառնի ձեռով (հմմտ. Մուղնի—Մուղնեցի, Բջնի—Բջնեցի և այլն):

Յեկարքունյաց պյուղերի մի ցանկում Դելի-դարդաշ
գյուղի կողքին, վորն այժմ յան Նոր Բայազիդ - Գավառ - Բյայվառ քաղա-
քից հեռու չե, գտնում ենք մի գյուղի անուն - **Գավառնի**,²⁾ վորն ան-
կասկած հենց Նոր Բայազիդ - Գավառ - Բյայվառն է:

Կու նաև յերբորդ ապացույցը: Նույն նոր Բայազղի բերդի գլխին մատուռի հարավային կողմութ մի մեծ խաչքարի յերկար պատվանդանի վրա կա մի արձանագիր, վորը նաև եստամպաժով վերծանելով կարդում եմ այսպես:

«Ե բվ.ԲՃԴՅ. ես Ամիր Վահնապո [որ]զի Վասիլ Խօխանի սինեցի
զեկ[է]ղ[է]ց[ի]ս եւ զԳավառան առուն հանեցի Կնիվանաց ձորէն
եւ սարերէն. Բճակիչք զեղիս խոսս[ա]ց[ա]ն սար[ին], Պ. Ժ[ա]մ, Կ[ա]ս[ա]
ր[ո]ղ[ը]ն ա[ւր]ին[ն]ին [յ]ս[ստուծո]ւ 3),

Մինչև հիմա այս ԲՃՂԱ տարեթիվը հայոց հին թվական հաշվելով՝
արձանագիրը համարել են $291+551=842$ թվականի։ Իմ կարծիքով կան
տվյալներ, վորոնք հակում են բնդունելու, թե այս ԲՃՂԱ տարեթիվը
պետք է հաշվել հայոց փոքր կամ Սարկավագի տոմարով, և ըստ այսմ ար-
ձանագրության թվականը կլինի $291+083=1,374$. Արդ X.V դարի այս
արձանագրի մեջ ահա Գավառի կամ Քյավառի առուն կոչվում Գավա-
ռանո առու։

Այսպիսով ուրիմն մեզ հետաքրքրող տեղանունը տիսնում ենք նոր ու խաձայն ձևով—գալուստի, վորից և Գալվառանո (— Գալվառանոյ), ձիշտ նշակես Առերանի—Առերանո (— Առերանոյ), Արածանի—Արածանո

¹⁾ *Geschichtliche* 258.

²⁾ Շահինաթունյան, Բ., 261. Խեցքը - Արքայի գործընկալը

³⁾ Մեր ընթերցման տարրեւությունները համեմատելու համար տեսեք Ամբատյան, «Գեղարքունիք», 643:

Քանի դեռ տեղանունը միայն գալիքու ձևով եր հայտնի, այն կարե-
ի եր հայերեն «զավառ» բառով ստուգաբառնել։ Իսկ հիմա, երբ հրապա-
ռակ են զալիս տեղանվան նոր ձևեր են, անի վերջածանցներով, պետք ե-
թողնել հին բացատրությունը, վորովհետեւ տեղանվան այս փոփոխակները
նոր ու պարզորոշ ստուգաբառություննեն են շշնջում համառուել։

三

Գավառնի, Գավառանի ձևերի 6ի, անի վերջածանցներն աշխարա վը-
այում են տեղանվան մինչ-հայկական ծագման մասին։ Նրանց համազոր
երջածանցներ են ի6ի ունի, վորոնցից վերջինը պահպանվել է հայերե-
ռմ ել (հմմտ. Արծրունի, Ռշտունի, Քաջրերունի և այլն)։ Այս բոլոր վեր-
ածանցներով անուններն սկզբնապես տոհմանուն լինելով վերջը դարձել
ն տեղանուններ (հմմտ. հայք = հայեր ու Հայք = Հայաստան, պարսք
=պարսիկներ ու Պարսք = Պարսկաստան։ Մակվեցիք մինչև հիմա ել,
ըինակ, ասում են, «Հակոն գնաց Քրդերը», այսինքն քրդական դյու-
երը, քրդանոց)։

Հստ այստ ուրեմն Գավառնի - Գավառանին մինչհայկական մի տոհանուն է, վոր կպել, մնացել է մի ժամանակ Սևանա լճի մոտերքում ապղ մի տոհուի բնակավայրի վրա և դառել տեղանուն մի քանի ձևերով: Այս տեղանվան բոլոր ձևերը կարելի են հիմնավորել մինչհայկական այլ տոհանուն-տեղանունների համապատասխան ձևերով:

1. **Գավառանի** լիածայն ձերն ի հաստատություն կարելի է հիշատակ Ախուրիանի, Արածանի, Երիանի, Սիունի (= Սյունի) և այլն:

2. Ավելի սեղմ Փափառնի ձերն համապատասխանում են Արծնի, Բջնի որնի, Մուղնի և այլն:

3. Գավառան ձեն իսկ իրրի ուղղական՝ վերջահանգ ի հնչյունի անմով՝ կարելի ե նմանեցնել հետեւյալ տեղանուններին. Ախուրիանի—Առըրյան. *Դարեւանի—(հմմտ. Դարեւից)՝ Դարօն(ք), Երիանի—Երևան, աղխազունի—Մազխազանի—Մազխազան, *Սիսիանի—Սիսիան—Սիունի լիանի—Սևան (հմմտ. Երիանի—Երևան), *Հասիունի—Հացիւնի (հմմտ. Ացիւնաց)՝ Հասուն (ու Թեսևս նաև *Դաւինի—Դաւին).

4. Վերջապես **Գավառ** ձեռնի իրրե «անի» կամ «նի» ածանցը կորցրած յուր նմանորինակն ունի ի գեմա Ազաինի - Ազա, ¹⁾ Մազազնի - Մազազ թերիս նաև *Դուինի - Դու.) տղամանուն - տեղանուններեւ:

1) Գողթնում յերկու հին տեղանուն—Ազատու ու Գիրան—ժողովրդի բերանին պահպահի և Ազատ ու Գիրան ձևերով (Ալիշան «Սիսական», Վենետիկ, 1893, եջ 346): Արան- Ազատ անվան ժողովրդական Ազատ արտասանությունը, վոր անկասկած հնագույնն է, և հարուստ հետևանքներով: Հայկական մի քանի հին տեղանուններ այս արտասանություն բաձայն սրբազրելով՝ հայացրած Ազատ քաղաք, Ազատ զետ, Ազատ լեռ անունների փուրեն կունենանք Ազատ քաղաք, Ազատ զետ ու Ազատ լեռ, վոր և կլինի Մասսի հնագույնն անը: Այս ուղղումը մեզ հնարավորություն է տալիս վորոշելու .. յն ժողովրդի անհայտ բնակայրը, վոր հիշատակված և վանի ու Արմավիր սեպագիր արձանագրերի մեջ ազատնի կամ տինի անունով: Բայտ Նիկոլաևկու այս ժողովրդի յերկրամասը գտնվում եր Վանի համեմաթյամբ հյուսիսում, Արաքսից վոչ հեռու (Մ. В. Никольский «Клиникообразные надписи Ванских царей, открытые в пределах России» Москва, 1893, ներածություն, եջ 8 ողբեր ու վերածնություն, եջ 23 ու 25): Հիմա արդեն հաստատապես կարելի ե ասել, ազատնի ազատնի ժողովուրդը քավական յերկար կանգ է տուի և բնակչի Մասսի լեռան ակայքում՝ տարով որոն յուր անունը և հետքեր թողնելով Գեղարքունիքում, Գառնո ձում ու Գողթնում:

Անհնարին չե, վոր մեղ հետաքրքրող տեղանվան մի այլ ձեր լինի Գառնի տոհմանուն—տեղանունը՝ սղված լինելով Գավառնի ձեխց (հին ավագանութիւնը՝ Մանավաղկերտ—Մանաղկերտ): Այս զեպքում կծագի նոր հարց, թե արդյոք նույն այս Գավառ—Գավառնին չե կամ որա հետ կապ չունի՞ Յեղեգյաց ավանի մոտ Յախացքարի Զ=1251 թվականի արձոնաշղումի մեջ հիշատակված «ի Գեղարքունի գեղն Գառնի», վոր Որբելյան պատմիչը հիշում ե Գառնակեր անունով¹⁾:

Գավառնին ու Գառնին նույնացնող թեղին առաջնորդում ե գեղի նոր միտք. դուրս ե գալիս, վոր մի խումբ անունների զուգահեռ կա Սևանու լճի հարավ-արևելքայ, լեռնաշղթայի հյուսիսային ու հարավային լանջում—Գեղարքունիքում ու որա մոտիկ վայրերում և Գառնո ու Վայոց ջերում—Գեղարքունիքում ու որա մոտիկ վայրերում և Գառնո ու Վայոց ձորերում: Հյուսիսում կա Աղատ (=Աղա) քաղաք ու ավերակներ, *Գառնի Սյունի! ու Մազաղնի, հարավում՝ Աղատ (=Աղա) գետ, Գառնի, Գեղամի Սյունի! ու Մազաղնի, հարավում՝ Աղատ (=Աղա) գետ, Գառնի, Գեղամի (ըստ Խորհնացու), Գեղ ու Գեղայո լեռ, Դարակ գյուղ ու Մազաղ գավառ: Խիստ ուշազրակ ե, վոր այս անվանախումբը նկատվում է Մասսի շրջանում ու Գառնի ու Գոնառուկ²⁾ Կողովտում, *Գեղատում ել. Աղատ (=Աղա) լեռ, Գառնի ու Գոնառուկ²⁾ Կողովտում, *Գեղատում ել. Աղատ (=Աղա) լեռ, Գառնի ու Գոնառուկ²⁾ Կողովտում, *Գեղատում ել. Վայոց ջերակը³⁾ ։ Գար այս անվանուաց լիճ³⁾ (=Գեղատուաց, վորի հայացքած ու դատուս քաղաք ու *Գեղատուաց լիճ³⁾) ։ (=Գեղատուաց, վորի հայացքած ու դատուս քաղաք ու Գառնական ատուղարանական ձեռ ե Գայրատուաց ։ Հմմտ. Հերակլ՝ հայացքած Հայրակլ⁴⁾). Դարակ գյուղ ու գետակ, Դարօնք բերդ ու թերես յացքած Հայրակլ⁴⁾։ Դարակ գյուղ ու գետակ, Դարօնք բերդ ու թերես

¹⁾ Կ կոստանյանց «Վիմական Տարեգիր», Պետերուրգ, 1913, եջ 94, արձ. 1251։ Առ. Որբելյան «Պատմությունն նահանգին Սիսական», Ղուկաս. մատեն. Դ. Թիֆլիս, 1911, էջ 424 ու Ալիշան «Սիսական», 154: «Գառնակեր» տեղանվան ստուգանության մասին Հյուրշմանն զգուշացնելով գրում ե. «Qarnaker... kann doch nicht=Garn „Lamm“+ker «essend» (=Lammesser) sein» (H. Hubschmann. «Die altarmenische Ortsnamen». Strassburg, 1904 էջ 417):

²⁾ Համ Ալիշանի կեռնավիք (Ալիշան «Այրարատ», Վենետիկ, 1890, եջ 508) ու ըստ Աղոնցի Գերենվիկ (Հ. Ածոնց «Արմենիա և էպոխա Յուստինիա» ԾՊԲ, 1908 էջ 316):

³⁾ Գեղատուաց—Գեղատուաց—Գայլատուաց լճի ու Գեղամա ծովի առափնյա հին բը-նակչության յերեմի աղութան մասնակի հետքը մնացել ե նորաձե կերպարանք ստացած հետեւյալ ցրուցի մեջ. — «Աւանդեն ինակիչք կողմանցն (Գայլատուաց. թ. Ա.) ի Գեղամա ծովին բերեալ ազգս ինչ ինչ ձկանց և լցեալ յայս ծովակ հրամանաւն կուսակալին նրեանայ» (!!! թ. Ա.): (Ալիշան «Այրարատ», 491):

⁴⁾ Հերակլ սնունն այսպես հայրացքած ձեռ ե գրված մաս հազարամյա մի խաչքարի արձանագրի մեջ, վորը ու թիվ անգամ մերերի 1-ին զանելով նոր Բայազիդի ձորամիջի գերեզմանատան մի հասարակ շիրմի վրա՝ փոխազրել տիկ նույն քաղաքի Գյուղացու տան թանգարանը: Այս յերկրորդ հազվագյուտ խաչքարն է Գագիկ Ա. Բագրատունու ժամանակից մնացած և ունի հետեւյալ արձանագրությունը նևիթ =1,000 թվականից:

- | | |
|--------|---|
| 1 տող— | + ի թվականութեան |
| 2 »— | Հառոց ՚Նևիթ ի թագաւորութեան Գ- |
| 3 »— | [աղ]կա եւ Հայրակլ կազենցի ս- |
| 4 »— | [ու]րբ Սարգիս յաւ[զ]նականութեան |
| 5 »— | [ւ]ե ինձ եւ ամուսնին եւ ուղեացս իմ. որ Կ- |
| 6 »— | [արդ]ա, զիս լիքցե. եւ Հարակլ ազատ |
| 7 »— | . . . բաքարա . . . ի եռդամասն եր . . . |
| 8 »— | ո Փառ . . . բազում մե . . . |

Նույն անունը Հայրական ու Հայրակղէս ձեերով ունի նույն թուման Արծրունին («Պատմութիւնն առան Արծրունեաց», ՍՊԲ, 1887, Բ.գ. 88—97 ու Բ. դ. 98, 101):

նաև Մաս-իք (Մաս-եաց) լեռ: Այս անվանախմբերի մեջ աներկբա լսելի յեն վոչ միայն Գիլան, այլ և Մազան—Դարան տոհմանուն—տեղանունները: Շղթաների այս զուգահեռ կորելի լրացնել մի զույզ նոր ողակով Սևանա լիճ հյուսիսում ու Սևան ամրոց ավելի հարավում, Վանա լճից մոտավորապես գեղի հյուսիս-արևելքի:

Տեղանունների այս զուգահեռները վկայում են վոչ թե մի առանձին տոհմի. այլ մեկ ամբողջ տոհմախմբի մեծաղանդաղ ու ծավալուն շարժման մասին, վորը մշակապատ անցյալում դարալիր հորձանքով ընդգրկել ե մեր միջաշապրհի լեռնաստանը:

Այս կետում վերջացնելով համառոտակի ասածներս՝ փակում եմ այս ակնարկը, վոր գրված ե մեկ նպատակով—ապացուցել, թե հիմակա նոր Բայազիդ կոչվածը, վորտեղ գտնվեց սեպագիրը, մի աննշան ու շարքային շենանոց չե յեղել հսադարում, այլ մի յերեկի կենտրոն Սևանա լճի առափնյա տոհմախմբի մեջ, և նրա Գավառ անունը ծագում ե վոչ թե հայերեն գավառ բառից, այլ Գավառնի—Գավառանի մինչ-հայկական տոհմանունից:

Առ այժմ այսքան: Սպասենք նորագյուտ սեպագրի գիտական ընթերցումին:

192. թ. սեպտեմբերի 18-ին,
Յերևան:





ԲՈՒԿ.ԲՈՒ
91767
4

[504]

A ^{III}
2650

ԳՐԱՌԵՎԻ. № 421 (Բ). ՊԱՏՎԵՐ № 66. ՏԻՐԱԳ 100.
ՀԱՅՈՒՆԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0067959

A 111
2650